

50 նոր հնարավորություն Վրաստանի համար

ան-Եվրամիության ասոցացման մասին համաձայնությունը միջազգային համաձայնություն է, որը օգնելու է Վրաստանին մերձենալու Եվրամիությանը բոլոր ոլորտներում: Վրաստան-Եվրամիություն ասոցացման համաձայնության մի մասն է կազմում ազատ առևտրի մասին համաձայնությունը: Ասոցացման համաձայնության իրականացումը աջակցելու է Վրաստանին կազմավորվել որպես Եվրոպական ձևի պետություն: Համաձայնությունը բաղկացած է 1000 էջից, այն ի նկատի ունի Վրաստանի օրենսդրության փուլ առ փուլ մերձեցումը Եվրամիության օրենսդրությանը:

Ասոցացման մասին համաձայնության նախաստորագրումը տեղի է ունեցել 2013 թվականի նոյեմբերի 23-ին, որը նշանակում է, որ «Գոյություն ունեցող տեքստը հնարավոր է ենթակա լինել միայն խմբագրված ուղղումներին»: Համաձայնության ստորագրումը նախատեսված է 2014 թվականի օգոստոսին: Ասոցացման համաձայնության կարևոր մասը, այդ թվում ազատ առևտրի մասին, գործելու է փաստաթուղթը ստորագրելուն պես, իսկ ամբողջությամբ այն կգործի Եվրամիության 28 անդամ երկրների ազգային խորհրդարանների, Եվրախորհրդարանի և Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացնելուց հետո: Այդ գործընթացի ավարտման համար անհրաժեշտ է 2-3 տարի:

Համաձայնությունը իրականացվելու է հաշվի առնելով Վրաստանի ազգային յուրահատկությունները: Եվրամիությունը օգնելու է Վրաստանին բարեփոխումներ իրականացնելու գործում՝ փորձագետների և պետական բյուջեի համար գումար հատկացնելու ճանապարհով: Վրաստանը նաև հնարավորություն կունենա գումարներ ստանալ Եվրոպայի ֆինանսական կազմակերպություններից՝ ինֆրակառուցվածքային նախագծերի (այդ թվում՝ ճանապարհների, կամուրջների, ջրամատակարարման համակարգի և այլն) իրականացման համար:

Եվրամիությունը աջակցում է Վրաստանի տարածքային ամբողջականությանը միջազգայնորեն ճանաչված սահմաններում և օգնում Վրաստանին խաղաղ ճանապարհով վերականգնել տարածքային ամբողջականությունը, որը շարունակվելու է ասոցացման համաձայնության ստորագրումից հետո:

Ըստ ասոցացման համաձայնության, Վրաստանը և Եվրամիությունը կ'իրականացնեն անհրաժեշտ բոլոր հնարավորությունները, որպեսզի ապահովեն Եվրամիության հետ անայցագրային ռեժիմը:

Ասոցացման համաձայնությամբ հաշվի է առնված Եվրամիության հետ ազատ առևտուրը, որը նշանակում է Վրաստանում արտադրված բոլոր ապրանքների արտահանում Եվրամիության անդամ երկրներ առանց մաքսավճարի:

Վրաստան-Եվրամիության ասոցացման մասին համաձայնագրի ուղեցույց

Ասոցացման համաձայնության իրականացման արդյունքում Վրաստանում աճելու է ապրելակերպի մակարդակը: Մասնավորապես.

1. Բարելավվելու է մարդու իրավունքների պաշտպանությունը և ապահովվելու՝ օրենքի գերակայությունը.
2. Աճելու է դատական իշխանության անկախությունը և արդարադատության մատչելիությունը
3. Աջակցվելու է և լինելու՝ խոսքի և մամուլի, ինչպես նաև միության ազատություն
4. Առավել մատչելի կդառնա տարրական կրթությունը մայրենի լեզվով
5. Բարելավվելու է հասարակության մասնակցությունը երկրի կառավարման գործում
6. Ապահովվելու է տարածաշրջանների միջև սոցիալ-տնտեսական անհավասարության նվազեցումը և տարածաշրջաններում ապրող բնակչության ապրելակերպը բարելավելու մակարդակը
7. Աճելու են համագործակցության հնարավորությունները Վրաստանի տարածաշրջանների և Եվրամիության անդամ-երկրների տարածաշրջանների միջև:
8. Վրաստանի տարածաշրջաններին ավելի մեծ հնարավորություն կ'ընձեռվի մասնակցել Եվրամիության ծրագրերի և նախագծերի իրագործման մեջ
9. Ապահովվելու է զբաղվածության և աշխատանքի հետ կապված ցանկացած խտրականության վերացումը
10. Բարելավվելու է աշխատանքով ապահովված անձանց իրավունքների պաշտպանությունը
11. Ստեղծվելու է հատուկ ծառայություն՝ աշխատանքի հետ կապված օրենսդրության պրակտիկայում իրականացնելու վերահսկման նպատակով



12. Ապահովվելու է աշխատանքային պայմանների բարելավումը
13. Աշխատանքով ապահովված անձանց առողջության և անվտանգության պաշտպանության նպատակով ստեղծվելու են աշխատանքային չափորոշիչներ
14. Ապահովվելու է սոցիալական արդար պաշտպանության համակարգի կազմավորումը
15. Հզորացվելու է Առողջապահության պաշտպանության համակարգը և բարելավվելու բժշկական ծառայության մակարդակը
16. Ավելի շատ ուշադրություն է դարձվելու հիվանդությունների կանխարգելման, սկզբնական շրջանում հայտնաբերման և վերահսկման վրա
17. Խրախուսվելու է առողջ ապրելակերպը
18. Բարելավվելու է մասնավոր սեփականության, մտավոր սեփականության իրավունքների, այդ թվում ապրանքանիշի, աշխարհագրական նշումների, դիզայնի, արտոնագրերի և այլնի պաշտպանությունը
19. Ուժեղացվելու է պայքարը՝ կազմակերպված հանցագործության, ահաբեկչության, բռնաշորթության, թմրամիջոցների անօրեն օգտագործման, մարդկանց առևանգելու (թրեֆիկինգ) դեմ:
20. Վաճառվելու է միայն անփաս սնունդ և անվտանգ ապրանք
21. Վրաստանում հիմնվելու է Եվրամիության շուկային համատեղելի շուկա
22. Պարզեցվելու է Վրաստանի և Եվրամիության միջև ներմուծման և արտահանման արարողակարգը
23. Բարելավվելու է մրցունակ միջավայրը



24. Աճելու են ներդրումները Վրաստանի էկոնոմիկայի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ էներգետիկայի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, ինֆրակառուցվածքների, բնապահպանության, մշակույթի և այլ բնագավառներում
25. Հիմնվելու են նոր ընկերություններ և ստեղծվելու լրացուցիչ աշխատատեղեր
26. Վրաստանը կմիանա Եվրամիության համընդհանուր էներգոհամակարգին
27. Կաճի Վրաստանի էներգետիկական անվտանգությունը, որը նշանակում է էլեկտրոէներգիայի և բնական գազի անխափան մատակարարում օգտատերերին
28. Աճելու է վրացական արտադրանքի (այդ թվում գյուղատնտեսական արտադրանքի) որակը և դրա մրցունակությունը համաշխարհային և Եվրամիության շուկաներում
29. Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման նպատակով ստեղծվելու են նոր ձեռնարկություններ, բացի այդ, նորացվելու և արդիականացվելու են գոյություն ունեցող գյուղատնտեսական ձեռնարկությունները
30. Երկրի տարածքը առավելագույնս պաշտպանվելու է կենդանիների և բուսական աշխարհի հիվանդությունների ներկրումից և տարածումից
31. Աճելու է զբոսաշրջիկների հոսքը Եվրամիության երկրներից
32. Բարելավվելու է բարձրագույն կրթության մակարդակը և մոտեցվելու եվրոպական չափանիշներին
33. Ընդլայնվելու է համագործակցությունը Եվրոպայի և Վրաստանի բարձրագույն կրթական և հետազոտական հաստատությունների միջև



34. Աճելու է փոխանակման ծրագրերի քանակը, որին մասնակցելու են ուսանողները, գիտնականները, պրոֆեսոր-մանկավարժները
35. Զարգանալու է մասնագիտական կրթության և վերապատրաստման համակարգը
36. Աճելու է ճանապարհային, (ցամաքային) ծովային և օդային տրանսպորտի մակարդակը և անվտանգությունը
37. Իրականացվելու են նախագծեր ջրամատակարարման համակարգը կարգավորելու և բնակչությանը մաքուր ջրով ապահովելու նպատակով
38. Իրականացվելու է մշտական վերահսկում խմելու ջրի և օդի մաքրության որակի համար, ինչպես քաղաքներում, այնպես և տարածաշրջաններում
39. Լճերի և Սև ծովի ափամերձ գոտու ջրի որակը բարելավելու նպատակով, իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ: Լողավազաններում պարբերաբար վերահսկվելու է աղտոտ նյութերի առկայությունը
40. Աճելու են ձեռնարկությունների պարտավորությունները՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը ապահովելու, համապատասխան միջավայրի պաշտպանության նպատակով տեխնոլոգիաներ ներդնելու օգնությամբ
41. Գործելու է «Կեղտոտողը վճարելու է» սկզբունքը, թափոններ առաջացնողը կամ սեփականատերը պարտավոր է հատկացնել գումարներ թափոնները նվազեցնելու, անժստ և անվտանգ ձևով այն տեղադրելու նպատակով
42. Բարելավվելու է աղբարկղների իրավիճակը, գործելու են թափոններ և մնացուկներ վերամշակող ձեռնարկություններ

43. Անց են կացվելու միջոցառումներ ջրհեղեղների ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ
44. Կատարելագործվելու են կենսաբանական բազմազանության՝ այդ թվում վերացման եզրին հասած բուսական և կենդանական աշխարհի պաշտպանության մեխանիզմները: Բարելավվելու է նրանց վիճակը և բնակելի միջավայրը
45. Արմատավորվելու է անտառների ռեսուրսների կառավարման, հաշվառման և խելամուռն օգտագործելու Եվրոպայում գոյություն ունեցող փորձը
46. Կատարելագործվելու է վերահսկման համակարգը ծառերի և անտառների անօրեն հատման և անօրեն վաճառման վերացման նպատակով
47. Նպաստել Վրաստանի մշակույթի քաղաքականությանը, որը հոգալու է մշակութային բազմազանության, մշակութային ժառանգության և ինքնության պահպանման և պաշտպանության համար:
48. Վրաստանը ստանալու է աջակցություն՝ Եվրամիության անդամ-երկրներում Վրաստանի մշակույթի տարածման համար
49. Առանց աշխարհագրական դիրքի տարբերության բոլոր սպառողներին նպաստել, որպեսզի մատչելի գնով ստանան հեռուստահաղորդակցական ծառայություն
50. Նպաստել հեռուստահաղորդակցական ծառայության տեսակների բազմազանությանը և նոր հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը:

